

ՍԱՂՄՈՍ 38

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Չարչավող մարդու աղոթք	Աղոթք պատժելու ժամանակ	Հիվանդության ժամանակ բժշկության համար աղոթք (Ողբ)	Չարչավողի աղոթք	Աղոթք նեղության մեջ
<u>MT ներածություն</u> «Դավթի Սաղմոսը հիշատակի համար»				
38:1-8	38:1-2	38:1-2	38:1-2	38:1-3
	38:3-5	38:3-4	38:3-4	38:4-6
		38:5-6	38:5-8	
	38:6-8			
		38:7-8		38:7-8
38:9-12	38:9-10	38:9-11	38:9-12	38:9-10
	38:11-12			38:11-12
		38:12		
38:13-22	38:13-14	38:13-14	38:13-14	38:13-14
	38:15-20	38:15-16	38:15-17	38:15-16
		38:17-20		38:17-18
			38:18-20	
				38:19-20
	38:21-22	38:21-22	38:21-22	38:21-22

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)

ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն, և այլն

ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Այս Սաղմոսն ունի Սաղմոս 32 և 51-ի հետ շատ ընդհանրություններ:

Բ. Հրեական մտածելակերպի մեջ մեղքը և հիվանդությունը կապված են: Մեղքի խոստովանությունը բերում էր պատասխանված աղոթք և մտքի, հոգու և մարմնի նորոգություն:

Երբ մեկը նայում է նշված բոլոր ֆիզիկական խնդիրներին, այստեղ առկա են չափից ավելի շատ առանձնահատկություններ միայն մեկ հիվանդության համար: Հավանաբար դրանք փոխաբերական իմաստով են (տես՝ Եսայի 1:5-6): Եթե այդպես է, Սաղմոսի առանցքը ֆիզիկական բժշկությունը չէ, այլ մեղքի թողությունը:

Գ. Ինչպես և շատ Սաղմոսներում, կապը այս երևույթների միջև՝

1. ֆիզիկական խնդիրների
2. թշնամիների հարձակումների
3. ընկերների կողմից մերժվածության

անհայտ է: Դրանք կապված են, սակայն ինչպես՝ առեղծված է: Արդյո՞ք դրանք բառացի են, թե փոխաբերական իմաստով, կապված մեղքի սոցիալական հետևանքների հետ:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՅՎԱԾ) ՏԵՔՍ. ՍԱՂՄՈՍ 38:1-8

¹Ո՛վ ՏԵՐ, Քո զայրույթով ինձ մի՛ հանդիմանիր

Ու խիստ վրդովմունքով ինձ մի՛ խրատիր:

²Որովհետև Քո նետերը մխրճվել են իմ մեջ,

Քո ձեռքը շատ է ծանրացել ինձ վրա:

³Մարմնիս մեջ առողջություն չկա Քո բարկության դեմ,

Ու ոսկորներիս մեջ հանգստություն չկա իմ մեղքի պատճառով,

⁴Քանի որ հանցանքներս գլխիցս վեր բարձրացան,

Ծանր բեռան պես խիստ ծանր են ինձ համար:

⁵Վերքերս հոտեցին ու նեխեցին իմ հիմարության պատճառով:

⁶Անհանգիստ եմ . խիստ խոնարհվեցի,

Ամբողջ օրը ողբալով եմ շրջում,

⁷Քանի որ երկամունքս մի նողկալի աղտով լցվեց .

Ու մարմնիս մեջ առողջություն չկա:

⁸Թույլ ու փշրված եմ . մռնչացի սրտիս հեծեծանքից:

38:1-8 Անգելերն թարգմանություններից շատերը այս բաժինը բաժանել են մի քանի պարբերությունների: Պարբերությունների բաժանումը տեքստային խնդիր չէ: Այն ենթադրություն է և ոչ թե ներշնչանք:

Սաղմոսներգուն նկարագրում է իր վիճակն ու զգացողությունները:

1. նա զգում է ՅԱՀՎԵԻ անբարեհաճությունը՝
ա . մի՛ հանդիմանիր ինձ Քո զայրույթով – BDB 406, KB 410, *Hiphil* ԱՆԿԱՏԱԲ՝ կիրառված ՀԱՅՏԱԿԱՆ իմաստով, տես՝ Սաղմ . 6:1
բ . խիստ վրդովմունքով ինձ մի՛ խրատիր – BDB 415, KB 418, *Piel* ԱՆԿԱՏԱԲ՝ կիրառված ՀԱՅՏԱԿԱՆ իմաստով. այս ԲԱՅԸ հաճախ կիրառվում է ուխտի խախտումների դեպքում (տես՝ Ղևտ . 26:18, 28, Սաղմ . 6:1, 39:11, 94:10, 118:18, Ովս . 10:10)
2. նա զգում է ՅԱՀՎԵԻ պատիժը՝
ա . Քո նետերը մխրճվել են իմ մեջ, տես՝ 2 Օր . 32:23, Հոբ 6:4, Սաղմ . 7:12-13, 45:5

բ. Քո ձեռքը շատ է ծանրացել ինձ վրա, տես՝ Սաղմ. 32:4, 39:10 (ուշադրություն դարձրեք երկու տողերում էլ միևնույն ԲԱՅԻՆ, սակայն կիրառված տարբեր իմաստներով, BDB 639, KB 692)

3. ՅԱՀՎԵԻ անբարեհաճության ֆիզիկական հետևանքը (մեղքի պատճառով, Սաղմ. 38:3բ, 4,5բ)

ա. մարմնիս մեջ առողջություն չկա (BDB 1022, *shalom*)

բ. ոսկորներիս մեջ հանգստություն չկա

գ. վերքերս (բառացի՝ «սպիներս», BDB 289) հոտեցին (BDB 92, KB 107, *Hiphil* ՎԱՂԱԿԱՏԱՐ) ու նեխեցին (BDB 596, KB 583, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ)

դ. խոնարհվեցի («ծռեցի», BDB 730, KB 796, *Niphal* ՎԱՂԱԿԱՏԱՐ, «ծռեցի ցած», BDB 1005, KB 1458, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ, տես՝ Սաղմ. 35:14) ողբալով

ե. երիկամունքս լցվեցին (BDB 569, KB 583, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ) նողկալի ախտով

զ. կրկնվում է ա. կետը

է. թույլ եմ (BDB 806, KB 916, *Niphal* ՎԱՂԱԿԱՏԱՐ, բառացի՝ «սպառված»)

ը. փշրված (BDB 980, KB 221, *Niphal* ՎԱՂԱԿԱՏԱՐ, *Piel* Սաղմ. 51:8-ում)

թ. մռնչացի (BDB 980, KB 1367, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ, այսինքն՝ կենդանական ձայներ)

Նկատելով ՎԱՂԱԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿԻ ԲԱՅԵՐԻ լարը: ՅԱՀՎԵԻ «գայրույթը» (BDB 893) և «բարկությունը» (BDB 409) եկել են (ԱՆԿԱՏԱՐՆԵՐ) և մնացել (ՎԱՂԱԿԱՏԱՐՆԵՐ): Ի՛նչ սարսափելի մտքի և մարմնի վիճակ է (Սաղմ. 38:4, 8բ):

38:4 «գլխիցս վեր» Այս ԲԱՅԸ (BDB 716, KB 778, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ) կիրառվում է ջրի համար:

1. ջրհեղեղը որպես պատերազմ – Եսայի 8:8, 23:10, Դան. 11:10,40, Նաում 1:8

2. ալիքներ – բառացի Եսայի 54:9-ում

3. ալիքներ – փոխաբերական իմաստով խնդիրների և զգացմունքների մասին՝ Սաղմ. 42:7, 88:16-17, 124:4-5

Սաղմոսերգուի մեղքի հանցանքը ծանրաբեռնել էր նրան:

38:5 «նեխել» Այս ԲԱՅԸ (BDB 596, KB 628, *Niphal* ՎԱՂԱԿԱՏԱՐ) կիրառվում է Ղևտացիների 26-ում, անեծքների և օրհնությունների հատվածը գուգահեռ 2 Օրինաց 27-28: Այն արտահայտում է «հոտած ապականություն» (տես՝ Ղևտ. 26:39 /երկու անգամ/): Մեղքը կործանում է: Հաճախ սարսափելի կերպերով:

38:6 «ողբալով» Այս տերմինը երբայերենի «խավարել» (BDB 871) արմատից է: Այն կարող է նշանակել՝

1. մուգ գույնի հագուստ հագած՝ որպես սգի նշան

2. գլխի վրա հող ցանել՝ որպես սգի նշան

3. սրտի, շնչի և հոգու վիճակի համար դարձվածք (այստեղ հայտնի մեղքի պատճառով)

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍԳԱԼՈՒ ԾԵՍԵՐ

❖ «անհանգիստ եմ /ծռվեցի/. խիստ խոնարհվեցի» Առկա են երկու համազոր ԲԱՅԵՐ՝

1. անհանգիստ – BDB 730, KB 796, *Niphal* ՎԱՂԱԿԱՏԱՐ, որը կարող է դիտարկվել որպես՝ ա. տարակուսանք՝ շփոթմունք – Եսայի 21:3

բ. մտքի այլասերվածություն – 1 Թագ. 20:30, Առակ. 12:8

գ. բառացի – որը համապատասխանում է համազոր ԲԱՅԻՆ

2. խոնարհվեցի – BDB 1005, KB 1458, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ, որը կարծես թե արտահայտում է ծոված մարմին՝ որպես ծոված սրտի պատկեր

38:7 «գոտկատեղ/երիկամունք» Մի քանի տերմիններ կան, որոնք կիրառվում են ՀԿ-ում ներկայացնելու ամբողջ անձին՝

1. շունչը – BDB 659, *nephesh*
2. հոգին – BDB 924, *ruah*
3. սիրտը – BDB 524, *leb*
4. երիկամները – BDB 480
5. միայն այստեղ՝ գոտկատեղ – BDB 492

Մի քանիսն էլ կան: Միայն համատեքստը կարող է որոշել, թե երբ է այս գաղափարը նկատի առնված: Մարմնի մի մասը ներկայացնում է ամբողջ անձին:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 38:9-12

ՊՎ ՏԵՐ, Քո առջև է իմ ամբողջ ցանկությունը

Ու իմ հեծեժանքը Քեզնից չի ծածկվել:

¹⁰Միրտս բարախում է, ուժս լքել է ինձ,

Աչքերիս լույսն անգամ գնացել է:

¹¹Միրելիներս ու բարեկամներս իմ խոցի պատճառով հեռու են մնում,

Ազգականներս էլ են հեռու մնում,

¹²Ու կյանքս որոնողները որոգայթ են լարում,

Ու ինձ չարիք կամեցողները կործանելու մասին են խոսում

Ու ամբողջ օրը նենգություններ են մտածում:

38:9-12 Այս պարբերությունը նույնպես նկարագրում է հեղինակի սարսափելի վիճակը:

1. նրա վիճակը՝
 - ա. նրա փափազը (այսինքն՝ աղոթքը) ՅԱՀՎԵԻ առաջ (այսինքն՝ ներման և փոխհարաբերության վերականգնման համար)
 - բ. նրա հեծեժանքը հայտնի է ՅԱՀՎԵԻՆ, տես՝ Սաղմ. 31:10
2. նրա ֆիզիկական վիճակը՝
 - ա. սրտի բարախները – BDB 695, KB 749, *Niphal* ՎԱՂԱԿԱՏԱՐ
 - բ. ուժը լքել է – BDB 736, KB 806, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ
 - գ. աչքերի լույսը գնացել է – ԲԱՅԵՐ չկան. սա նկատի չունի կուրություն, այլ առողջության, ուրախության, խաղաղության պակաս, տես՝ Սաղմ. 13:3, 1 Թագ. 14:29, Եզրաս 9:8
3. միջանձնական հարցեր՝
 - ա. սիրելիները հեռու են կանգնում
 - բ. ընկերները հեռու են կանգնում
 - գ. հարազատները հեռու են մնում
 - դ. թշնամիները փնտրում են նրա մահը՝
 - 1) որոգայթներ են լարում
 - 2) խոսում են կործանելու մասին
 - 3) ամբողջ օրը նենգություններ են մտածում. ԲԱՅԸ BDB 211, KB 237, բառացի՝ «հառաչել»: Սաղմոսերգուն «հառաչում է» (BDB 980, Սաղմ. 38:8), սակայն ամբարիշտները «որոգայթ են լարում» (տես՝ Առակ. 24:2):

38:11

NASB, NKJV

NRSV, JPSOA

TEV

NJB

REB

«պատուհաս»

«նեղություն»

«վերքեր»

«ախտ»

«հիվանդություն»

Այս բառը (BDB 619) նշանակում է «կաթված, վերք», «ժանտախտ» կամ «նշան»:

1. ժանտախտ – տես՝ Ծննդ. 12:17, Ելից 11:1, 3 Թագ. 8:37-38, 2 Մնաց. 6:28-29, Սաղմ. 39:10, 91:10
2. բորոտություն (ՀԿ իմաստով) – Ղևտացիների 13-14, 2 Օրինաց 24:8
3. վերք – 2 Օրինաց 17:8, 21:5, Եսայի 53:8
4. խրատ (երեխաների համար) – 2 Թագ. 7:14, Սաղմ. 89:32, Առակ. 6:23

Շատ բառեր ունեն բազմակի կիրառություններ, այլապես մարդու բառապաշարը հնարավոր չէր լինի ճանաչել և կիրառել: Երբ մեկնաբանը հասնում է համատեքստին, նրանք փնտրում են բնագրի հեղինակի սկզբնական մտադրությունը և որ այդ օրերի ունկնդիրների, ընթերցողների համար հասկանալի լինի: Այս համատեքստը աստվածատուր ֆիզիկական դրսևորումն է մեղքի հանդեպ Իր ունեցած անբարեհաճության: Պատիժը նպատակ ունի վերականգնելու տվյալ անձի հավատքը: Այս համարում զուգորդումը առաջարկում է, որ ֆիզիկական պատիժը վախեցրեց նրանց, ովքեր տեսան այդ, անգամ մտերիմ ընկերներն ու բարեկամները:

Հետևաբար, որոշում կայացնելիս, մի քանի հարց է առաջանում՝

1. Ի՞նչ ֆիզիկական դրսևորում:
2. Ինչո՞ւ դրսևորում:
3. Ինչո՞ւ հենց իր մտերիմների արձագանքը:
4. Արդյո՞ք սա փոխաբերական է, թե բառացի:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 38:13-22

¹³Սակայն ես խուլի պես չեմ լսում ու համրի պես եմ, Որ բերանը չի բացում:

¹⁴Եվ ես այնպիսի մի մարդու նմանվեցի,

Որ չի լսում, ու կշտամբանք չկա նրա բերանում:

¹⁵Քանի որ, ո՛վ ՏԵՐ, իմ հույսը Քո վրա է:

Դու լսելու ես ինձ, ո՛վ իմ ՏԵՐ Աստված:

¹⁶Քանի որ ասացի. «Լսի՛ր ինձ, որ չծիծաղեն վրաս նրանք, Որ ոտքս սահելու պահին իմ դեմ գոռոզանում են»:

¹⁷Քանի որ ընկնելու պատրաստ եմ,

Ու իմ ցավը մշտապես իմ առջև է:

¹⁸Քանի որ հանցանքս կհայտնեմ ու մեղքիս համար ցավում եմ:

¹⁹Բայց իմ թշնամիները ողջ են, նրանք ուժեղ են .

Ինձ անիրավացիորեն ատողները բազմացել են,

²⁰Նաև բարության փոխարեն վատություն անողներն ինձ թշնամություն են անում, Քանի որ ես լավության հետևորդ եմ:

²¹Ինձ մի՛ լքիր, ո՛վ ՏԵՐ, ո՛վ իմ Աստված,

Մի՛ հեռանա ինձնից:

²²Շտապի՛ր ինձ օգնության հասնելու,

Ո՛վ ՏԵՐ, իմ փրկություն:

38:13-22 Այս պարբերությունը ունի ներկայիս իրավիճակների խառնուրդ (հիվանդություն, ցավ, վնասվածք) և հետագայում ՅԱՀՎԵԻ ողորմության հույս:

1. ներկայիս ֆիզիկական խնդիրները՝
 - ա. չի լսում (այսինքն՝ ձևացնում է, որ չի լսում նրանց բամբասանքը), Սաղմ. 38:13, Սաղմ. 39:2,4
 - բ. չի խոսում (այսինքն՝ չի պատասխանում իրեն զրպարտողներին, տես՝ Ես. 53:7), Սաղմ. 38:13բ
 - գ. պատրաստ է ընկնելու, Սաղմ. 38:16բ-17ա. նեղության փոխաբերություն, տես՝ 2 Օր. 32:35, Աստծո ճամփան ուղիղ էր, բարձր, և մարտուր ամեն տեսակ խոչընդոտներից
 - դ. ցավը մշտապես իր առջև է (նրա մեղքը ծանրանում էր նրա վրա), Սաղմ. 38:17բ, Սաղմ. 51:3
 - ե. լի է անհանգստությամբ, Սաղմ. 38:18

2. նրա թշնամիները հարձակվում են, Սաղմ .38:16,19-20
 ա. նրանք զորանում են և բազմանում, Սաղմ .38:19ա
 բ. նրանք անիրավացիորեն ատում են իրեն, Սաղմ .38:19բ
 գ. նրանք բարիքի փոխարեն չարիք են հատուցում, Սաղմ .38:20, Սաղմ .35:12, 109:5
 դ. նրանք հակառակվում են նրան, քանի որ նա բարիք է գործում, Սաղմ .38:20բ
3. վստահություն ՅԱՀՎԵԻ սիրո, ողորմության և ներման վրա
 ա. հույսը (բառացի՝ «սպասել», BDB 403, KB 407, *Hiphil* ՎԱՂԱԿԱՏԱՐ) ՅԱՀՎԵԻ վրա,
 Սաղմ .38:15ա, տես՝ Հոր 13:15, Սաղմ .31:24, 33:22, 39:7, 42:5,11, 43:5
 բ. վստահ է, որ ՅԱՀՎԵՆ կպատասխանի իր աղոթքին, Սաղմ .38:15բ
 գ. վստահ է, որ իր թշնամիները չեն հաջողելու և կույ չեն տալու իր ընկնելը, Սաղմ .38:16
 դ. նա աղոթում է (երկու ՀԱՅՑԱԿԱՆ, մեկ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ)
 - 1) ինձ մի լքիր – BDB 736, KB 806, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով,
 տես՝ Սաղմ .9:10, 71:9, 18, 94:14, 119:8, Եսայի 49:14
 - 2) ինձնից հեռու մի՛ մնա – BDB 934, KB 1221, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ
 իմաստով, տես՝ Սաղմ .22:11, 19, 35:22, 71:12
 - 3) շտապի՛ր ինձ օգնության հասնելու – BDB 301, KB 300, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝
 Սաղմ .22:19բ, 40:13, 70:1,5, 71:12, 141:1

38:18 Սա այս Սաղմոսի աստվածաբանական բանալին է (տես՝ Սաղմ .32:5): Խոստովանությունը բերում է՝

1. ՅԱՀՎԵԻՑ ներում (տես՝ Սաղմոս 51, 1 Հովհ .1:9-2:1)
2. անձը ինքն իրեն է ներում
3. փոխհարաբերության նորոգության զգացողություն

Խոստովանությունը ընդունում է՝

1. ՅԱՀՎԵԻ օրենքները խախտելու մարդկային հանցանքը
2. ՅԱՀՎԵԻ ներելու և ողորմելու բնավորությունը

38:19

NASB, NKJV	«եռանդուն»
NRSV	«առանց պատճառի»
TEV	«առողջ»
NJB, REB	«առանց հիմքի»
NET Աստվածաշունչ	«ոչ մի պատճառով»

MT տալիս է «կենդանի» (ծ״ր, BDB 313), սակայն մի քանի անգլերեն թարգմանություններ շտկում են արմատը՝ ծռ, BDB 336, տես՝ Սաղմ .35:19, 69:4: Սա համընկնում է հաջորդ տողի գուգահեռականության հետ՝ «որոնք ինձ անիրավացիորեն ատում են» (BDB 1055):

38:20 «թշնամություն» Սա երբայերեն արմատ է (BDB 966), որից ստանում ենք «սատանա» տերմինը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍԱՏԱՆԱ
SPECIAL TOPIC: SATAN

Այս թեման բարդ համարելու համար կան մի քանի պատճառներ.

1. ՀԿ-ը հայտնում է ոչ թե բարու ռիսերիմ թշնամուն, այլ ՅԱՀՎԵԻ մի ծառայի, որը մարդկությանը առաջարկում է երկրնտրանք, ինչպես նաև մեղադրում է մարդկությանը անարդարության մեջ: Կա միայն մեկ Աստված (մոնոթեիզմ՝ միաստվածություն), մեկ իշխանություն, ՀԿ-ում միայն մեկ պատճառ՝ ՅԱՀՎԵՆ:

2. Աստծո ռիսերին թշնամու հասկացությունը ձևավորվել է միջաստվածաշնչյան (անկանոն) գրականության մեջ՝ պարսկական դուալիստիկ կրոնի (*Չրադաշտականության*) ազդեցության ներքո: Սա էլ իր հերթին մեծապես ազդեցություն է թողել ռաբբիական Հուդայականության և Էսսենների համայնքի վրա (այսինքն՝ Մեռյալ Ծովի Գալարները):
3. ՆԿ-ը զարգացում է ՀԿ-ի թեմաները ամբողջական, սակայն ընտրված կատեգորիաներում:

Եթե մեկը հասնում է չարի մասին ուսումնասիրությանը ըստ աստվածաշնչյան պատկերացումների՝ տեսանկյան, (յուրաքանչյուր գիրքը կամ հեղինակը կամ ժանրը առանձին ուսումնասիրելով և ուրվագծելով), ապա ի հայտ են գալիս չարի վերաբերյալ տարբեր տեսանկյուններ:

Սակայն եթե մեկը հասնում է չարի մասին ուսումնասիրությանը ոչ սուրբգրային մոտեցմամբ կամ աշխարհի ու արևելյան կրոնների հավելյալ աստվածաշնչյան մոտեցմամբ, ապա ՆԿ-ի հիմնական զարգացումները այս թեմայի շուրջ ստվերվում են պարսկական դուալիզմով և Հունա-հռոմեական սպիրիտիզմով:

Եթե ինչ-որ մեկը գիտակցաբար վստահում է Սուրբ Գրքի աստվածային հեղինակությանը, ապա ՆԿ-ի զարգացումները պետք է դիտարկվեն որպես պրոգրեսիվ՝ զարգացող հայտնություն: Քրիստոնյաները պետք է զգուշանան հրեական ժողովրդական բանահյուսությունից՝ ֆոլկլորից կամ արևմտյան գրականությունից (Դանթե, Միլթոն), որպեսզի դրանք չխառնվեն այս հասկացության զարգացմանը: Իհարկե որոշակի առեղծված և անորոշություն կա այս բնագավառում հայտնության մեջ: Աստված ընտրել է չհայտնել չարի հետ կապված ամեն ինչ՝ դրա ծագումը, զարգացումը, նպատակը, սակայն հայտնել է դրա պարտությունը:

ՀԿ-ում «սատանա» կամ «գրպարտող» (BDB 966) տերմինը կարող է առնչվել երեք տարբեր խմբերի հետ:

1. մարդ գրպարտողներ՝ մեղադրողներ (տես՝ 1 Թագ.29:4, 2 Թագ.19:22, 3 Թագ.11:14,20,29, Սաղմ.109:6)
2. հրեշտակ գրպարտողներ (տես՝ Թվոց 22:22-23, Հոր 1-2, Չար.3:1)
3. դիվական գրպարտողներ (տես՝ 1 Մնաց.21:1, 3 Թագ.22:21, Չար.13:2)

Միայն հետագայում միջաստվածաշնչային ժամանակաշրջանում է, որ Ծննդոց 3-ի օձը նույնացվում է Սատանայի հետ (տես՝ *Իմաստասիրության Գիրք* 2:23-24, 2 *Ենուլք* 31:3), և նույնիսկ հետագայում սա դառնում է ռաբբիների կողմից նախընտրելի տարբերակ (տես՝ *Մոթ*.9բ և *Մին*.29): Ծննդոց 6-ի «Աստծո որդիները» դառնում են հրեշտակներ *1 Ենուլք* 54:6-ում: Ես սա նշում եմ ոչ թե հաստատելու դրա աստվածաբանական ճշգրտությունը, այլ ցույց տալու դրա զարգացումը: ՆԿ-ում այս ՀԿ-յան գործերը բնորոշ էին հրեշտակներին, որոնք մարմնավորում էին չարին (տես՝ 2 Կորնթ.11:3, Հայտն.12:9):

Մարմնավորված չարի ծագումը՝ սկիզբը ՀԿ-ից դժվար է կամ անհնար է (կախված ձեր տեսակետից) սահմանել: Սրա պատճառներից մեկը Իսրայելի խիստ միաստվածությունն է (տես՝ 3 Թագ.22:20-22, Ժող.7:14, Ես. 45:7, Ամովս 3:6): Ամեն ինչի պատճառահետևանքային դրսևորումները վերագրված են ՅԱՀՎԵին՝ ցույց տալու Նրա յուրահատկությունը և առաջնահերթությունը (տես՝ Ես.43:11, 44:6,8,24, 45:5-6,14,18,21,22):

Տեղեկությունների համար հասանելի աղբյուրներն են՝ (1) Հոր 1-2, որտեղ Սատանան «Աստծո որդիներից» մեկն է (այսինքն՝ հրեշտակներից) կամ (2) Ես.14 և Եզեկ.28, որտեղ մերձարևելյան հպարտ թագավորները (Բաբելոնի և Տիվրոսի) կիրառվում են յուսաբանելու Սատանայի հպարտությունը (տես՝ 1 Տիմ.3:6): Այս մոտեցման մեջ ինպես երևում է ներգրավված են զգացումներ: Եզեկիելը կիրառում է Եղեմի Պարտեզի խորհրդապատկերները ոչ միայն Տիվրոսի թագավորի համար որպես Սատանան (տես՝ Եզեկ.28:12-16), այլ նաև Եգիպտոսի թագավորի համար՝ որպես Բարու և Չարի Գիտության ծառը (Եզեկիել 31): Սակայն Եսայի 14՝ մասնավորապես 12-14 համարները, կարծես թե նկարագրում է հպարտության պատճառով հրեշտակների մի ապստամբություն: Եթե Աստված ուզեր մեզ հայտնել Սատանայի ծագումն ու նրա բնավորությունը, սա շատ անսովոր կերպ և տեղ կլիներ դրա համար: Մենք պետք է զգուշանանք սխտեմատիկ աստվածաբանության միտումից, որը վերցնում է փոքր, երկիմաստ՝ կասկածելի

հատվածներ տարբեր կտակարաններից, հեղինակներից, գրքերից և ժանրերից և դրանք համադրում որպես մեկ աստվածային գլուխկոտրուկի մասնիկներ:

Ես համամիտ եմ Ալբերտ Էդերշեյմի հետ (Albert Edersheim, *The Life and Times of Jesus the Messiah*, Հիսուս Մեսիայի կյանքը և ժամանակները, հատ.2, հավելվածներ XIII [էջ 748-763] և XVI [էջ 770-776]), որ ռաբբիական Հուդայականությունը մեծապես ազդվել է պարսկական դուալիզմի և դիվական խորհրդածումների կողմից: Այս բնագավառում ռաբբիները չեն կարող հանդիսանալ ճշմարտության լավագույն աղբյուրը: Հիսուսը արմատապես առանձնանում է՝ տարբերվում է, այս բնագավառում Սինագոգների մատուցած ուսմունքից: Ես կարծում եմ, որ ՅԱՀՎԵԻ հրեշտակապետ թշնամու այս հասկացությունը զարգացել է Իրանական դուալիզմի երկու բարձրագույն աստվածներից՝ *Ահկիմանից* և *Օրմազայից* (Ahkiman, Ormaza), և ապա ռաբբիների կողմից կատարելագործվել որպես աստվածաշնչյան ՅԱՀՎԵԻ և Սատանայի դուալիզմի:

Անկասկած ՆԿ-ում առկա է աճող՝ առաջադիմական հայտնություն չարի մարմնավորման վերաբերյալ, բայց ոչ այնքան մանրակրկիտ ինչպես ռաբբիների մոտ: Այս տարբերության լավ օրինակներից է «երկնքում պատերազմը»: Սատանայի անկումը տրամաբանական անհրաժեշտություն է, սակայն դրանց մանրամասները տրված չեն: Անգամ այն ինչ տրված է, քողարկված է ապոկալիպտիկ ժանրով (տես՝ Հայտն.12:4,7, 12-13): Չնայած որ Սատանան պարտության մատնվեց Հիսուսի կողմից և զգվեց երկիր, նա դեռևս գործում է որպես ՅԱՀՎԵԻ ծառա (տես՝ Մատթ.4:1, Դուկ.22:31-32, 1 Կորն.5:5, 1 Տիմ.1:20):

Մենք պետք է սանձենք մեր հետաքրքրությունը այս հարցում: Փորձության ու չարիքի անձնական գործությունը առկա է, բայց ամեն դեպքում կա միայն մեկ Աստված և միևնույն է մենք ենք պատասխանատու մեր որոշումների՝ ընտրությունների համար: Գոյություն ունի հոգևոր պայքար, թե՛ փրկությունից առաջ և թե՛ հետո: Հաղթություն կարելի է միայն ունենալ և մնալ դրա մեջ Երրորդության Աստծո օգնությամբ: Չարը արդեն պարտված է և բնաջնջվելու է:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Արդյո՞ք ՅԱՀՎԵՆ պատժում է իր մեղավոր հետևորդներին այս կյանքում (Սաղմ . 38:2-3):
2. Արդյո՞ք Սաղմ .38:4 շատ մեղքերից խոստովանություն է, թե գրականական կերպ բացատրելու ամբողջ մարդկության մեղավոր վիճակը:
3. Թվարկե՛ք ֆիզիկական խնդիրները, որոնք ուղեկցում են չխոստովանված մեղքին:
4. Սահմանե՛ք «ժանտախտ/խոց» բառը Սաղմ .38:11-ում: Արդյո՞ք ձեր սահմանումը բացատրում է ուրիշների արձագանքը նրա հանդեպ:
5. Ինչպե՞ս է «ոտքի սայթաքման» պատկերը կապված մեղքի կյանքի հետ:
6. Ինչո՞ւ է Սաղմ . 38:18 այդքան կարևոր: